# Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ա Յ Ի Ն  Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ՀԱՅԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՆԱԽԱԳԾՈՂ՝ Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ 2020

ԿԱԴ - Ա1-017

# ԱՐՏՈՆԱԳԻՐ

## ԱՌԱՋԻՆ ԴԱՍ

## ԵՆԹԱԴԱՍ «Ա1»

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

ՃԱՐՏԱՐԱԳԵՏ - ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐ

## ՄՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՍԵԴՐԱԿԻ

Սահմանափակումներ՝ Արդյունաբերական, բնակելի և հասարակական ոչ ավել 16 հարկից,
մինչև 51մ բարձրությամբ շենքեր, մինչև 50մ թռիչքով տարածական կոնստրուկցիաներով շինություններ,
ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մաս կազմող արհեստական կառույցներ,
որոնք համապատասխանում են մինչև IV ռիսկայնության աստիճանի,
բացառությամբ քաղաքաշինական նորմատեխնիկական փաստաթղթերով
սահմանային հարաչափերը (բարձրություն, երկարություն, լայնություն) գերազանցող շենքերի և կառույցների:
Վերը նշված վերակառուցում, վերականգնում և ուժեղացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՆԱԽԱԳԱՀ Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ Ա. ԳՈՒԼԱՐՅԱՆ

02565827

ՏՐՎԱԾ Է 15.03.2019
ԱՆԺԱՄԿԵՏ

*Հաստատում եմ*

*ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ Անհատական ձեռնարկության*

*Տնօրեն ______ Ս. Մուրադյան*

«06» ____ 09 ____ 2024թ.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի կիսակառույց շինության տեխնիկական վիճակի և վերակառուցման վերաբերյալ

Պատվիրատու՝ Մարմաշենի համայնքապետարան

Ընդհանուր դրույթներ

Շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննման համար որպես իրավական հիմքեր և նորմատիվային չափորոշիչներ հանդիսանում են.

-ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. փետրվարի 3-ի թիվ 24 հրամանով հաստատված ՀՀՇՆ –II-6.02.2006 թ. ,, ՍԵՅՍՄՈԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԵՐ,, շիննորմերը:

-ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թ. դեկտեմբերի 8-ի թիվ 280-N հրամանով հաստատված ,, ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ և ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅԱՆ և ՎԿԱՅԱԳՐԱՎՈՐՄԱՆ (ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՄԱՆ) ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ,, :

Կախված առաջադրանքից և տեխնիկական անհրաժեշտությունից, կատարվում են շենքերի հետազննության երկու ձևեր

-դիտողական

-դիտողագործիքային:

Դիտողական հետազննության ժամանակ իհայտ են բերվում երևացող թերությունները, դեֆորմացիաները, կոնստրուկցիաների տարրերի չափերի, ձևի ու դիրքի շեղումները, ճաքերի առկայությունն ու տեղաբաշխման բնույթը, ինչպես նաև մեխանիկական , կոռոզիոն ,կենսաբանական , այրվածքային և այլ տիպի վնասվածքները, միաժամանակ նշելով նրանց առաջացման հնարավոր պատճառները:

Շենքերի դիտողագործիքային հետազննության ժամանակ լրացուցիչ կատարվում են նաև .

-Նստվածքների, ճկվածքների, ուղղաձիգ շեղումների, հենարանային հարթակների տեղափոխությունների և այլ չափումներ:

-Ճաքերի բացվածքի լայնության չափումներ:

-Կոնստրուկցիաների նյութերի ամրության որոշում չքայքայող և առաձգական հետհարվածի մեթոդներով:

-Բետոնի ,ամրանների և մետաղե կոնստրուկցիաների կոռոզիոն վնասվածության, ինչպես նաև փայտյա կոնստրուկցիաների կենսաբանական վնասվածության գնահատում:

Հետազննությունների հիման վրա որոշվում է .

-կրող կոնստրուկցիաների վնասվածության աստիճանը,

-շինության ընդհանուր ֆիզիկական մաշվածությունը,

-շենքերի և շինությունների շահագործման համար պիտանելիությունը,

-տների և բնակարանների բնակության համար պիտանելիությունը:

Հետազննություններն իրականացվում են բացառապես նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան , անաչառ և անկողմնակալ սկզբունքով՝ նախապես ներկայացված առաջադրանքների ու պայմանների համաձայն:

*Հետազննության նպատակը*

Կատարվել է Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի կիսակառույց շինության ակնադիտական զննություն հետևյալ նպատակով.

-Գնահատել շինության կրող տարրերի տեխնիկական վիճակը ։

-Որոշել կրող համակարգի կոնստրուկտիվ –հատակագծային լուծումների համապատասխանությունը գործող նորմերին:

-Որոշել շինության կանգուն մնացած կոնստրուկցիաների հետագա շահագործման համար պիտանելիությունը և դրանց օգտագործման նպատակահարմարությունը:

-Տալ առաջարկություններ ուժեղացման , վերականգնման և վերակառուցման անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ:

-Ներկայացնել տեխնիկական եզրակացություն:

*Տարածքի սեյսմոերկրաբանական պայմանները*

Համաձայն ՀՀ սեյսմիկ շրջանացման քարտեզի և ՀՀՇՆ –II-6.02.2006 նորմերի հավելված 1-ի, շինությունը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում , երրորդ կարգի գրունտների վրա, փոքր թեքությամբ ռելիեֆով բնութագրվող պայմաններում:

*Շինության կոնստրուկտիվ նկարագրությունը և տեխնիկական վիճակը*

Շինությունը կառուցված է 1990-1991 թվականներին, որպես դպրոցի մասնաշենք: Ժամանակին կառուցվել է նկուղային հարկաբաժինը և առաջին հարկի պատերի մի մասը,որից հետո շինարարությունը դադարեցվել է:

Հատակագծում շենքը ուղղանկյունձև է:

Շենքի հիմքերը հոծ համատարած սալի տեսքով են:

Շենքի նկուղի կրող տարրերը միաձույլ երկաթբետոնյա պատերն են, արտաքինները 45-50 սմ, ներքինները 45 սմ լայնությամբ:

Ծածկերն իրականացված են մի մասում միաձույլ երկաթբետոնից կողավոր սալերի տեսքով, մի մասում հավաքովի ծածկի սալերով, որոնք տեղադրված են երկայնական և լայնական պատերի վրա:

Բացվածքների բարավորները միաձույլ երկաթբետոնից են , հանդիսանում են կրող պատերի բաղկացուցիչ մասերը և իրականացված են պատերի հետ ընդհանուր միաձուլմամբ:







Նկ. 1; 2; 3 Հացիկի կիսակառույցի տեսքերը հարավային և արևմտյան կողմերից:

Վերնահարկի մի հատվածում կառուցված են քարե պատերի մի մասը, մինչև բարավորի մակարդակ,մյուս մասերում պատերը կառուցված են 300-1400 մմ բարձրությամբ՝ տարբեր տեղերում:

Պատերն իրականացված են տեղական կտրված տուֆից ցեմենտյա շաղախով 450 մմ լայնությամբ: Պատերի հորիզոնական կարանների մեջ տեղադրված են ամրանային ցանցեր: Պատերի փոխհատման տեղերում տեղադրված են ամրանաձողեր՝ խաչաձև և տավրաձև ուրվագծով :Միջին պատերի եզրային հատվածում պատերի փոխհատման տեղերում ամրանային կարկասներ չեն տեղադրված:

Արտաքին պատերի մեջ լուսամուտի լայն բացվածքների երկու կողմերում տեղադրված են պատի լայնությամբ հարթ կարկասներ՝ հետագայում բացվածքների՝ շուրջ երկաթբետոնից շրջակալներ կառուցելու նպատակով:

Բակի կողմում ,շենքին կից ,կառուցված են երկաթբետոնյա բաժակաձև հիմքեր՝ նկուղի հիմքերի խորությամբ փոսորակի մեջ, որոնք նախատեսված են եղել կից սպորտդահլիճի կառուցման համար:

Զննության պահին ամրանակարկասների մեծ մասը կտրված են ծածկի մակարդակից 100-150 մմ բարձրության վրա:Կանգուն մնացած ամրանաձողերը ժանգոտված են, որոշ մասը ծռված, բացակայում են խամուտները : Պատերի կանգուն մնացած հատվածներում առկա են քանդված ,խախտված և կիսափլված շարքեր,որը հետևանք է մարդկանց միջամտության և մթնոլորտային ազդեցությունների:

Երկարատև մթնոլորտային ազդեցություններից ծածկի սալերը չեն վնասվել ՝շնորհիվ նրանց վրա իրականացված բետոնյա շերտի,որը հողմահարվելով պաշտպանել է կոնստրուկցիաները վնասվելուց:

Բակի բաժակաձև հիմքերի բետոնները քայքայվել են և կորցրել կրողունակությունը:

Բաժակաձև հիմքերի մասում ներկայումս առաջացել է փոսորակ,որը լցված է շինաղբով:

## Նախատեսվող կոնստրուկտիվ ձևափոխությունների բնույթը

Շենքի գործառնական նշանակության փոփոխությամբ պայմանավորված, նախատեսվում է կատարել մի շարք կոնստրուկտիվ ձևափոխություններ.

-Նկուղի կոնստրուկտիվ համակարգի փոփոխություն չի կատարվելու, սակայն նախատեսվում է բետոնացնել դեպի նկուղ տանող աստիճանավանդակի ծածկը և նկուղի արտաքին դռան դիմաց կառուցել աստիճաններ և հենապատ:

-Ըստ հատակագծային նոր լուծման,պատերի ամբողջականությունն ապահովելու համար անհրաժեշտ է հեռացնել խարխուլ և կիսաքանդ պատերի







Նկ. 4; 5; 6. Փոսորակում ե/բ հիմքերի, նկուղի կոնստրուկցիաների և կանգուն մնացած պատերի ու ամրանակարկասների ելուստների տեսքերը:

հատվածները,ներքին կրող պատերի մեջ կատարվելու են բացվածքների լրաշարքեր և լրացվելու են բացակայող պատերը, բետոնացվելու են սյուներն ու միջուկները:

Նոր ամրանակարկասների հենակմախքների տարրերի հուսալի խարսխման համար բոլոր կարկասների տեղերում ստեղծել խարսխաձողեր՝ նախապես բացված թեք անցքերի մեջ պոլիմերցեմենտային շաղախների կիրրառմամբ:

-Ծածկերի մակարդակում անհրաժեշտ է ստեղծել անընդհատ գոտի-բարավորներ՝ բոլոր պատերի պարագծով, որոնց հետ պետք է միաձուլվեն ծածկի սալերը:

-Կառուցել սալվածք, արտաքին աստիճաններ և թեքահարթակ՝ տարածքի նիշերի վերափոխված բարձրություններին համապատասխան:

-Կատարել պատերի արտաքին դեկորատիվ մշակում՝ գործառնական նշանակությանը համապատասխան՝ ապահովելով ջերմամեկուսացման անհրաժեշտ մակարդակը:

## *<u>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</u>*

Համաձայն ՀՀՇՆ –II-6.02.2006 նորմերի և Բնակելի և հասարակական շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի գնահատման մեթոդական ցուցումների, Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի կիսակառույց շինության կրող տարրերի վնասվածությունը գնահատվում է .

-պատերի հատվածում՝ **զրո-առաջին** աստիճանի

-նկուղի ծածկի սալերի մասում՝ **զրո** աստիճանի:

Պատերի մնացորդային կրողունակությունը համարվում է բավարար և այն ենթակա է մասնակի վերականգնման՝ համապատասխան միջոցառումների կիրառմամբ:

Ծածկի սալերի ուժեղացում նկուղային հարկի մակարդակում չի պահանջվում:

Կոնստրուկտիվ ձևափոխությունները և վերակառուցման աշխատանքները պետք է կատարվեն հաստատված նախագծով՝ սեյսմոկայուն շինարարության գործող նորմերին համապատասխան:

Փորձագետ կոնստրուկտոր, Ս. Մուրադյան

ՀՀ քաղաքաշինության նախարարության *Պետական լիցենզիա 16072*

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրում վերակառուցվելիք մանկապարտեզի շենքի աշխատանքային նախագծի

Իրականացված է Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրում գտնվող համայնքային հողատարածքում կառուցվող միահարկ երկխմբանի մանկապարտեզի աշխատանքային նախագիծը:

Նախագծի համար որպես հիմք են հանդիսանում.

- Նախագծային առաջադրանքը:
- ՀՀ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:
- Օբյեկտի նախագծման տեխնիկական պայմանները:
- Արխիվային տվյալներ տարածքի ինժեներաերկրաբանական և սեյսմիկ պայմանների վերաբերյալ:
- Կիսակառույց շենքի տեխնիկական վիճակի մասին մասնագիտական եզրակացությունը:

Համաձայն ՀՀՇՆ-II-6.02.2006 նորմերի և սեյսմոերկրաբանական հետազոտությունների արխիվային տվյալների, տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում: Որպես հիմնատակ ընդունված են երկրորդ կարգի գրունտները,որոնց համար գրունտների հորիզոնական արագացման մեծությունն ընդունված է 400սմ/վրկ. քառ.:

Տարածքի կլիմայական պայմանները հետևյալն են.

-բացարձակ նվազագույն ջերմաստիճանը` -33 աստ.

- բացարձակ առավելագույն ջերմաստիճանը` +41 աստ.

-քամու արագությունը` 25 մ/վրկ

-ձյան նորմատիվային ճնշումը` 70 կգ .ուժ/ մ.քառ.

- գրունտային ջրեր` 5 մ -ից ցածր

-գրունտի սառեցման առավելագույն խորությունը` 1.1 մ:

***Ճարտարապետական մաս:***

Ներկայացված է տարածքի գլխավոր հատակագիծը և շենքի դիրքը բնակավայրի քարտեզի վրա: Շենքը տեղադրված է փոքր թեքության ռելիեֆի պայմաններում, արևելք -արևմուտք կողմնորոշմամբ:Այն կից է դպրոցի կիսակառույց մասնաշենքին:

Հատակագծային լուծումը կազմակերպված է երկու խմբերի համար` առանձին խաղասենյակներով և ննջարաններով, որոնք միմյանց հետ ունեն ներքին կապ:

Նախատեսված է սանհանգույց `առանձին զուգարանակոնքերով և ընդհանուր լվացարանով: Աշխատողների համար նախատեսված է առանձնացված սանհանգույց:

Նախատեսված է նաև խոհանոց, սպասք լվանալու սենյակ, լվացքատուն` արդուկելու հնարավորությամբ:

Նախատեսված են նաև պահեստներ` բանջարեղենի, սննդի և գույքի համար :

Նախատեսված են հանդերձարաններ, բուժկետ և տնօրենի աշխատասենյակ:

Տարահանումն ապահովելու ,ինչպես նաև սննդի մատակարարման համար , բացի գլխավոր մուտքից,նախատեսված են երկու ելքեր խմբասենյակներից դեպի բակ,և մեկ մուտք դեպի պահեստ:

Պատերը քարե շարվածքով են` արտաքինից ջերմամեկուսիչ շերտով: Ճակատից պատը երեսապատվում է տեղական տուֆի 40 մմ հաստությամբ սալիկներով: Մյուս երեք կողմերից ջերմամեկուսիչը սվաղվում է ամրանացանցի վրա ցեմենտավազային շաղախով և երեք կողմերից ներկվում արտաքին ճակատային դեկորատիվ ներկերով:

Պատուհանները մետաղոպլաստից են` երկշերտ ապակե փաթեթներով:

Ներքին դռները մետաղոպլաստից են, սպիտակ` միաշերտ ապակիներով, առանձին տեղերում խուլ փեղկերով:

Գլխավոր մուտքի մոտ նախատեսված է ապակեպատ ներկառուցված նախամուտք:

Միջնորմներն իրականցվում են 10 սմ հաստությամբ ամրանավորված պեմզաբլոկներով, որոնք պատերի և առաստաղների հետ միանում են ճկուն կապերով էլաստիկ ներդիրների կիրառմամբ:

Կտուրն իրականացվում է փայտից, տանիքը պրոֆիլավոր թիթեղից է` ազատ ջրթափի եղանակով:

Հատակները լամինատից են, պահեստներում, խոհանոցային բլոկում և սանհանգույցներում կերամիկական սալիկներով:

Ներսից պատերը հարդարվում և ներկվում են սոսնձային ներկերով:

**Կոնստրուկտորական մաս**

Մանկապարտեզի շենքը կառուցվում է գոյություն ունեցող կիսակառույց շենքի բազայի վրա, որից կառուցված են նկուղն ամբողջությամբ և առաջին հարկի պատերը 600 - 2700 մմ բարձրությամբ:

Հիմքերն ու նկուղի պատերն իրականացված են միաձույլ երկաթբետոնից, որոնց վերևի մակարդակում ստեղծված է մի մասում միաձույլ երկաթբետոնից, մի մասում հավաքովի անցքավոր սալերից ծածկը:

Նախագծվող շենքում կրող համարվում են միաձույլ երկաթբետոնյա սյուներով և պարզունակներով ստեղծված երկայնական շրջանակները, որոնք միաձույլ ծածկի և կապող հեծանների հետ առաջացնում են հստակ տարածական հենակմախք:

Պատերը կտրված քարից ցեմենտավազով ներկառուցված շարվածքից են, ըստ բարձրության, երկու շարքը մեկ տեղադրված մետաղական ցանցերով, որոնք խարսխվում են բետոնյա սյուների մեջ: Լայն պատուհանների բացվածքների երկու կողմերում ստեղծված են հարթ ամրանակարկասով շրջակալներ ամբողջ հարկի բարձրությամբ:

Պատերը դրսից երեսապատվում են 30 մմ հաստությամբ ջերմամեկուսիչով, ծածկվում են ամրանացանցով, որոնք պատերի հետ միանում են անկեռների և ցանցերի արտաթողերի միջոցով: Ճակատային պատերը երեսապատվում են տուֆի սալիկներով, որոնք անկեռների միջոցով ամրացվում են ցանցին և լցոնվում շաղախով:

Գոյություն ունեցող պատերի մի մասը քանդվում են, մի մասը լրաշարվում, մի մասում կատարվում է նոր շարք և լցաշարվում են ոչ անհրաժեշտ բացվածքները:

Ամրանակարկասների այն ծողերը, որոնք կարելի է օգտագործել, մաքրվում են ժանգից, լրացվում ըստ նախագծի, տեղադրվում անուրներն ու բետոնացվում: Այն տեղերում, որտեղ ամրանները կոնտուրից դուրս են` հեռացվում են, այնտեղ, որտեղ բացակայում են կամ կտրված են, տեղադրվում են անկեռներ պոլիմերցեմենտով, որոնց, ինչպես նաև եղած կարճակներին եռակցվում են նոր ամրանաձողերը ըստ նախագծի:

Երկաթբետոնյա գոտիները համարվում են նաև պատուհանների համար որպես բարավորներ: Ներքին դռների բացվածքների համար պատերում և միջնորմներում կառուցվում են երկաթբետոնյա բարավորներ:

Ծածկերն իրականացվում են հակառակ կողավոր միաձույլ երկաթբետոնյա ծածկի սալերով:

Ներքին ինժեներական ցանցերն իրականացված են համաձայն նորմատիվային պահանջների `մանկապարտեզի գործառնական նշանակությանը համապատասխան լուծումներով:

Ջրագիծը և կոյուղին իրականացվում են պլաստմասե խողովակներով , որոնց հորիզոնական բաշխում կատարվում է նկուղի ծածկի տակից և տեխնիկական պայմաններին համաձայն միացվում են արտաքին ցանցին:

Էլեկտրամատակարարումն իրականացվում է պղնձյա բազմաջիղ հաղորդալարերով` սվաղի տակ թաքնված հաղորդագծերով:

Ջեռուցումն իրականացվում է ալյումինից ջերմամարտկոցների կիրառմամբ` պլաստիկե խողովակներով, երկու շղթայով , երկու ջեռուցման կաթսաների միջոցով:

Բարեկարգումն իրականացվում է համաձայն առաջադրանքի: Նախատեսված են խաղահրապարակներ, հետիոտնային ճանապարհներ և կանաչապատ տարածքներ` մրգատու և դեկորատիվ ծառերով:

Շենքի պարագծով ստեղծվում է բազալտի կոտրված սալերով ցեմենտյա սալվածք:Մուտքի աստիճանների մոտ նախատեսված է թեքահարթակ: Նախատեսված է մուտք դեպի նկուղ:

Ամբողջ տարածքը ցանկապատվում է մետաղական կանգնակներով և շրջանակներով պարփակված գործված ցանցով:

Նախատեսվում է մետաղական ցանցապատ դարպաս և դռնակ:

**Նախագիծն իրականացված է համաձայն հետևյալ նորմերի.**

**-ՍՆԻՊ 2.01.07-85 Բեռնվածքներ և ազդեցություններ:**

**- ՍՆԻՊ 2.02.01-83 Շենքերի և կառուցվածքների հիմնատակեր:**

**- ՀՀՇՆ -II-6.02.2006 Սեյսմոկայուն շինարարության նախագծման նորմեր**

**-ՀՀՇՆ -IV-13.01.96 Քարե և ամրանաքարե կոնստրուկցիաներ**

**-ՍՆԻՊ 2.03.01.-84 Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ:**

Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

57216689
ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԹՄ 048744

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | ԱՆ | | |
| | | բացատրագիր | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՇԵՆՔԻ ՏԵՂԱԿԱՊՈՒՄԸ ՏԵՂԱՆՔՈՒՄ




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ · РА МАРЗ ШИРАК ЧАСТНЫЙ ПРЕДПРИНИМАТЕЛЬ
57216689
ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
01Ա 048744
МУРАДЯН ГРАЧЯ

| | | | |
|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ: ԱՆ · ԹԵՐԹ · ԹԵՐԹԵՐ |
| | | շենքի տեղակապումը տեղանքում | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 |

# ՀԱՑԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶԻ ԴՐՎԱԳ




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

57216689
ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
011 048744

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | | |
| | | | Հացիկ բնակավայրի սխեմատիկ քարտեզի դրվագ | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

## ՆԱԽԱԳԾՎՈՂ ԿԱՌՈՒՅՑԸ ՏԵՂԱՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ Մ 1:400




| | | |
|---|---|---|
| 1. | Կառուցվող օբյեկտի վայրը և անվանումը | Շիրակի մարզի Հացիկ գյուղ |
| 2. | Նախագծային հզորությունը | Կառույցի V = 2146 խմ<br>Կառույցի S = 650.5 քմ |
| 3. | Օբյեկտի հանձնման ժամանակը | _______ 2021թ. |

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Կառուցման ենթակա օբյեկտը՝ գտնվում է Շիրակի մարզի Հացիկ գյուղում:

Շինարարության ձևը ----- Կապիտալ շինարարություն:

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է՝

ՇՆևԿ 3.01.01 - 85 <<Շինարարության արտադրության կազմակերպում>>,

ՇՆևԿ 1.04.03 - 85 <<Շինարարության տևողության նորմաներ>> ձեռնարկներին համապատասխան:

Նախագիծը իրականացված է պահպանելով գործող հրդեհավտանգության և պայթունավտանգության պայմանները, ինչպես նաև ուշադրություն դարձնելով սանիտարա-հիգենիկ, էկոլոգիական անհրաժեշտ պայմանները, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում և ապահովում են մարդկանց առողջության պահպանումը և կյանքի ապահովվությունը:

Շինարարության տևողությունը կազմում է 9 ամիս:

Մինչ շին-մոնտաժային աշխատանքների սկսելը, պետք է անցկացնել անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական աշխատանքներ, որի կազմը և փուլերը ընդունված են ՇՆևԿ 3.01.01-85 ձեռնարկին համապատասխան: Իրականացվող շին.աշխատանքների ամբողջ համալիրը բաժանվում է 3 փուլերի:

1. Նախապատրաստական փուլ, որի ընթացքում ծրագրվում է՝
   Շինարարական հրապարակի ժամանակավոր պարսպապատման իրականացում:
   Ժամանակավոր շինությունների տեղադրում, որոնք նախատեսնված են ապահովելու շինարարության սանիտարա-կենցաղային, պահեստային և արտադրական կարիքները:
   Տարածքի առանձնացում՝ որպես արտադրական և բաց պահեստային տարածքներ
   Շին-մոնտաժային մեխանիզմների, ամբարձիչ-տրանսպորտային միջոցների և գործիքների առաքումը շին.հրապարակ:
   Շին.հրապարակի լուսավորման ապահովում:
2. Շին-մոնտաժային աշխատանքների իրականացման փուլ:
3. Հարդարման աշխատանքների փուլ:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | Ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | ԱՆ | | |
| | | Աշխատանքի կազմակերպման նախագիծ | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՇԻՆ - ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ Մ 1:400




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԿԱՌՈՒՑՎՈՂ ՕԲՅԵԿՏ
- ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ
- Է — ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՑԱԾՐ ԼԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴԱԼԱՐ
- Ջ — ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՋՐԱԳԻԾ
- ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԻՍՊ
- ԼՈՒՍԱՐՁԱԿ
- ՇԻՆ. ՄԵԽԱՆԻԶՄԻ ՇԱՐԺՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

### КС - 55713 ԱՎՏՈԿՌՈՒՆԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Բեռնաբարձությունը ----------- 4.0 - 25.0 տն

Բարձրացման բարձրությունը -------- 9.0 - 21.9 մ

Թռիչքի երկարությունը -------- 3.2 - 18.0 մ

| Անվանում | Քանակ | |
|---|---|---|
| ժամանակավոր պարիսպ | մ 278.48 | |
| ժամանակավոր ցածր լարմ. հաղորդալար | մ 204.16 | |
| ժամանակավոր ջրագիծ | մ 17.73 | |
| Աշխղեկի տնակ | քմ 15.0 | |
| Հանդերձարան | քմ 15.0 | |
| Փակ պահեստ | քմ 5.0 | |
| Իներտ նյութերի պահեստ | քմ 72.0 | |
| Լուսարձակ | հատ 5 | |
| բիոզուգարան | քմ 5.0 | |

### ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ԲԵՌՆԱՏԱՐ ԿԱՄԱԶ -------------- 2 հատ

ԱՎՏՈԻՆՔՆԱԹԱՓ ՄԱԶ - 565 -------------- 1 հատ

ԱՎՏՈԲԵՏՈՆԱԽԱՌՆԻՉ ՍԲ - 69 -------------- 1 հատ

ԱՎՏՈԲԵՏՈՆԱՃԱՂԱԽԱՏԱՐ ԱՍ - 0403Ա -------------- 1 հատ

ԲԵՏՈՆԱՊՈՄՊ Ս - 296 -------------- 1 հատ

ԵՌԱԿՑՈՂ ԱԳՐԵԳԱՏ -------------- 2 հատ

1 ԱՇԽՂԵԿԻ ՏՆԱԿ

2 ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ

3 ԻՆԵՐՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀԵՍՏ

4 ՓԱԿ ՊԱՀԵՍՏ

5 ԲԻՈԶՈՒԳԱՐԱՆ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | ԱՆ | | |
| | | շին - արտադրական հրապարակը հատակագծում | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:200







ԱՁ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

տարածքի հարթեցում - 540.0 քմ
բետոնից եզրաքարեր - 120.0 մ
բրեքչա սալվածք - 160.68 քմ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾՈՂ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | Ա Ն | | |
| | | | տարածքի արտաքին բարեկարգման հատակագիծ | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՀԱՏԱԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

| | ՍԵՆՅԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՏԱԿԻ ՀԱՏՈՒՅԹԸ | ՀԱՏԱԿԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ | ՄԱԿԵՐԵՍԸ Մ² |
|---|---|---|---|---|
| ԿՍ | ՆԱԽԱՍՐԱՀ /1/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-40 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 3.41 |
| ԼՀ | ՄԻՋԱՆՑՔ /2, 3/ | | ԼԱՄԻՆԱՏԵ ՀԱՏԱԿ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 94.47 |
| ԼՀ | ԲՈՒԺԿԵՏ /4/ | | ԼԱՄԻՆԱՏԵ ՀԱՏԱԿ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 23.62 |
| ԿՍ | ԽՈՀԱՆՈՑ /5/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 33.75 |
| ԿՍ | ՍՊԱՍ ԼՎԱԼՈՒ ՍԵՆՅԱԿ /6/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 27.0 |
| ԿՍ | ՊԱՀԵՍՏ /7,8,9/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 36.91 |
| ԼՀ | ՆՆՋԱՍԵՆՅԱԿ /10,17/ | | ԼԱՄԻՆԱՏԵ ՀԱՏԱԿ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 115.03 |

| | ՍԵՆՅԱԿԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՏԱԿԻ ՀԱՏՈՒՅԹԸ | ՀԱՏԱԿԻ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ | ՄԱԿԵՐԵՍԸ Մ² |
|---|---|---|---|---|
| ԼՀ | ԽԱՂԱՍԵՆՅԱԿ /11,16/ | | ԼԱՄԻՆԱՏԵ ՀԱՏԱԿ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 80.73 |
| ԿՍ | ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑ /12,13,15/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 27.01 |
| ԿՍ | ԼՎԱՑՔԻ ՍԵՆՅԱԿ /14/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 6.25 |
| ԼՀ | ՏՆՕՐԵՆԻ ՍԵՆՅԱԿ /18/ | | ԼԱՄԻՆԱՏԵ ՀԱՏԱԿ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 57.65 |
| ԼՀ | ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍԵՆՅԱԿ /19/ | | ԼԱՄԻՆԱՏԵ ՀԱՏԱԿ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 22.34 |
| ԿՍ | ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ /20/ | | ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿՆԵՐ 20 ՄՄ<br>Ց/ԱՎԱԶԵ ՀԱՐԹ. ՇԵՐՏ-30 ՄՄ<br>ՆԿՈՒՂԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱԾԿ | 18.73 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾՈՂ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | ԱՆ | | |
| | | հատակների մասնագիր | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ<br>արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

| | ԷՍՔԻԶ | ՄԱԿՆԻՇԸ | ՄԵԿ ԷԼԵՄԵՆՏԻ ՄԱԿԵՐԵՍԸ Մ² | ՔԱՆԱԿ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ Մ² |
|---|---|---|---|---|---|
| Դ-1 |  | ՄԵՏԱՂԱՊԼԱՍՏԵ ՏԻՊԻ ԱՊԱԿԵՊԱՏ ԴՈՒՌ | 2.88 | 1 | 2.88 |
| Դ-2 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ԱՊԱԿԵՊԱՏ ՄԻՋՆՈՐՄ | 6.785 | 1 | 6.785 |
| Դ-3 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ԽՈՒԼ ԴՈՒՌ | 1.68 | 4 | 6.72 |
| Դ-4 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ԱՊԱԿԵՊԱՏ ԴՈՒՌ | 1.89 | 10 | 18.9 |
| Դ-5 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ԱՊԱԿԵՊԱՏ ԴՈՒՌ | 1.87 | 2 | 3.74 |
| Դ-6 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ԽՈՒԼ ԴՈՒՌ | 1.47 | 8 | 11.76 |
| Դ-7 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ԽՈՒԼ ԴՈՒՌ | 1.89 | 2 | 3.78 |
| Դ-8 |  | ՄԵՏԱՂԱՊԼԱՍՏԵ ՏԻՊԻ ԽՈՒԼ ԴՈՒՌ | 2.43 | 3 | 7.29 |

| | ԷՍՔԻԶ | ՄԱԿՆԻՇԸ | ՄԵԿ ԷԼԵՄԵՆՏԻ ՄԱԿԵՐԵՍԸ Մ² | ՔԱՆԱԿ | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ Մ² |
|---|---|---|---|---|---|
| Պ-1 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ՊԱՏՈՒՀԱՆ | 3.96 | 11 | 43.56 |
| Պ-2 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ՊԱՏՈՒՀԱՆ | 2.16 | 2 | 4.32 |
| Պ-3 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ՊԱՏՈՒՀԱՆ | 2.34 | 3 | 7.02 |
| Պ-4 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ՊԱՏՈՒՀԱՆ | 0.36 | 2 | 0.72 |
| Պ-5 |  | ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԻՊԻ ՊԱՏՈՒՀԱՆ | 1.80 | 1 | 1.80 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | ԱՆ | | |
| | | դռների և պատուհանների մասնագիր | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ) Մ1:100




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | | |
| | | | նկուղային հարկի հատակագիծ (չափագրություն) | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |
| | | | | | | |

# ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ (ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ) Մ1:100




ԱՁ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Յ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Յ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | Ա Ն | | |
| | | | առաջին հարկի հատակագիծ | ԱՁ ՅՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |

# ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻ Մ1:100




-- ՔԱՆԴՎՈՂ ՊԱՏԵՐ

-- ԼՐԱՇԱՐՎՈՂ ՊԱՏԵՐ

Քանդվող պատեր 25.0 խմ
լրաշարք պատեր 46.0 խմ
Նոր շարվող պատեր 54.0 խմ

| | | | |
|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ / ԹԵՐԹ / ԹԵՐԹԵՐ |
| | | | ԱՆ |
| | | առաջին հարկի կոնստրուկտիվ փոփոխությունների հատակագիծ | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 |

Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
I/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

# ԳԼԽԱՎՈՐ ՃԱԿԱՏ <<Ա>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:100




| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | | |
| | | | գլխավոր ճակատ <<Ա>> առանցքով | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՃԱԿԱՏ <<Դ>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:100




| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | Ա Ն | | |
| | | | գլխավոր ճակատ <<Դ>> առանցքով | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |

## ՃԱԿԱՏ <<5>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:100





Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE


| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | Ա Ն | | |
| | | | գլխավոր ճակատ <<5>> առանցքով | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |

# ՃԱԿԱՏ <<1>> ԱՌԱՆՑՔՈՎ Մ1:100




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | | |
| | | | գլխավոր ճակատ <<1>> առանցքով | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |

# ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:100




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | | |
| | | | նկուղային հարկի հատակագիծ | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 | | |
| | | | | | | |

## ՆԿՈՒՂԻ ՄՈՒՏՔ Մ 1:50




## ԿՏՐՎԱԾՔ 1-1




## ԿՏՐՎԱԾՔ Ա-Ա




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
EXPERTISE

| | | | |
|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Ռ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |
| | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ: ԱՆ / ԹԵՐԹ / ԹԵՐԹԵՐ |
| | | Նկուղի մուտք, կտրվածք 1-1, Ա-Ա | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ արտոնագիր ԿԱԴ-Ա1-017 |

# ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՄԱԿՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:100




Ա/Ձ ՍԵԴՐԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
P/E SEDRAK MURADYAN

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Հացիկ գյուղի մանկապարտեզի վերակառուցում | | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Հ. ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | | | |
| | | | ճարտարապետաշինարարական մաս | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| | | | | ԱՆ | | |
| | | | առաջին հարկի | Ա/Ձ ՀՐԱՉՅԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | |

# ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:100


